ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ N 12

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Արագածի զանգված 18
Վաղարշապատ
Արմավիրի մարզ

N: 20 12. 1 2023թ.

Արմավիրի մարզպետ

պարոն Էդվարդ Հովահաննիսյանին

Մեծարգո՛ պարոն մարզպետ

Տեղեկացնում ենք Ձեզ , որ «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում առկա են «Աշխարհագրություն» (3-դասաժամ), «Պատմություն» (6-դասաժամ), «Ռուսաց լեզու» (6-դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղեր:
Կից ներկայացնում ենք թափուր հաստիքների համար տրված հայտարարությունը «Կրթություն» շաբաթաթերթում:

Առդիր՝ 1 էջ:

Դպրոցի տնօրեն՝ Ա.Բաբայան

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան հ. 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (3 դասաժամ), պատմության (6 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 11-ից մինչև հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա հունվարի 26- ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան հ. 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Էջմիածին, Արագած զանգված 18: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 85-31-10 հեռախոսահամարով